բացի հինգ յայտնի տաճարներից եւ Զուարթնոցին կից հին բազիլիկայի մնացորդից, որ երեւան եկաւ Խաչիկ վարդապետի պեղումներից յետոյ, որովհետեւ Գայիանէի վանքից քիչ դէպի արեւմուտք գտնուած են բազիլիք շէնքի քանդակներով մնացորդներ եւ գերեզմանական մի կոթող, որ բերուած էին Էջմիածնի թանգարանը, եթէ դրանք Եզր կաթողիկոսի շինած ներկայ տաճարից առաջ եղած մատուռի շրջանից չեն: Այս բազիլիք շէնքերի մնացորդներ կան իրար կից գտնուած Աշտարակում, Դըրըլթամիրում (այժմ Գինեւէտ կոչուած), Ագարակում, Բիւրականում, Արագածի արեւելեան փէշերին Արարանի շրջանում Ափնայ, Աստուածընկալ, Քասախ (Բաշ Ապարան), սորա դիմաց Քա-

նս յիշէ քս ատէ
փանոս ի քս թագ
աւորութեան

Իր պարզութեամբ եւ բառերով յիշեցընում է Կոմիտաս կաթողիկոսի արձանագրութիւնը Հռիփսիմէի արեւելեան ափսիդի պատին: Սա էլ մէկն է հայ գրի հին մնացորդներից:

Նման եկեղեցիներ կային եւ Հայաստանի այլ գաւառներում. Սիւնեաց երկրումն էր Ծիծեռնավանքը, ամենամեծ բազիլիկան մեր երկրում, վեց պիլոնների եւ համապատասխան որմնայեցների վրայ հաստատուած կամարներով,* մինչդեռ Տիկորը, Քասախը, Եղուարդը երեք երեք պիլոններ ունին միայն: Տարաբաղդաբար այդ շէնքը չենք

Պատկ. 14

սախի մեւս, ձախ ափին, Ծառայիչէն, այժմ Մոլլա Ղասըմ, գուցէ նաեւ, Սամաղարվէշ, որի եկեղեցին, թէեւ նորոգած իր վերին մասերով, բայց ունի նոյն շրջանին յատուկ քարեր եւ քանդակներ պատերի մէջ (Պատկ. 13), ուշադրութեան արժանի բոլորակ կիսասիւներով: Արագածի հարաւային լանջերին Աւանում, որի մի խոյակն ունինք այստեղ ձեռքի տակ (Պատկ 14), ինչպէս եւ նոյնանուն Աւանում, Քանաքեռից քիչ դէպի հարաւ եւ Երեւանից դէպի արեւելք: Խոյակի արձանագրութիւնն է

Քս ած ուրհնեա
ալ եւ յաւիտեա

տեսել անձամբ, իսկ տեղեկագրող Ե. Լալայեանցն էլ մանրամասնութիւններ չէ տալիս: Լոռիի շրջանում եւս ունինք նոյն ոճի հնագոյն մնացորդներ, ինչպէս Բրդաձորի եւ Խոժոռնիի աւերակները, բայց մանաւանդ

---

*Գուցէ եւ հինգ հինգ: Հաւանօրէն նոյն ոճի, ձեւի եւ մեծութեան եկեղեցի էր եւ Դուինի Ս. Գրիգորը, որ բացուեցաւ Խաչիկ վարդապետի պեղումներով, վերաշինուած հին տեղ, Սմբատ Բագրատունու եւ Աբրահամ կաթողիկոսի ժամանակ. Սեբէոս, ԺԸ. Գլ.: Յատակագծի մնացորդը Strzygowski. Die Armenische Baukunst. եր. 164, պատկ. 192: